



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2017 թվականի N 207-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի «բ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 17506-17 գեկուցագիրը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Հերսիկ Մաթետոյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, Մայրամ Բատոյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, Ծաղիկ Ավետիսյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, Արշալույս Հովհաննիսյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, Մարիամ Իմիշյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ և Էմմա Հովհաննիսյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2017 թվականի սեպտեմբերի 27
ք. Հրազդան



Կ. ԳՈՒԼՈՅԱՆ



Գրամական օգնություն ստացողների ցուցակ

| Ը/Ը | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումարը | Ծանոթություն |
|-----|------------------------|---|---------|--------------|
| 1 | Հերսիկ Մաթետայան | գ. Պողնի | 40 000 | |
| 2 | Մայրամ Բատոյան | գ. Գառնի | 40 000 | |
| 3 | Ծաղիկ Ավետիսյան | ք. Հրազդան, Վանատուր թաղամաս | 40 000 | |
| 4 | Արշալույս Հովհաննիսյան | գ. Արզական | 40 000 | |
| 5 | Մարիամ Իմիշյան | ք. Չարենցավան, 3 թաղամաս, 32 շենք, 55 բնակարան | 40 000 | |
| 6 | Էմմա Հովհաննիսյան | գ. Քասախ | 40 000 | |